մենշեւիկների քաղաքականութիւնն են հետապնդում վիրահայ ազգային փոքրամասնութեան հանդէպ։

Թէ այս քաղաքականութեան ոգին որքա՛ն դօրեղ է այսօրուայ Վրաստանում, այդ մասին կարելի է դաղափար մը կազմել եւ հետեւեալ փաստերից, որ անցողակի յիշատակում ենք։

Վերջին ժամանակներս Վրաստանի կառավարութիւնը ծրագրել էր ախալքալակցիների հետ հայերէն լեզուով յարաբերութիւններ պահել։ Զգիտենք, թէ այս մտադրութեան մէջ ի՞նչն է դերակշռում. արդեօք ռուսաց լեզուն, — որով մինչեւ վերջերս յարաբերութիւն էր պահւում — շրջաբերութիւնից հանելու ցանկութի՞ւնը, թէ՞ ախալքալակցիների հայրենաձիգ տրամադրութիւնները մեղմացնելու միտումը։ Սակայն, գիտենք, որ վրաց կոմունիստներն այնպիսի վայնասուն բարձրացրին այս նորմուծութեան դէմ, որ կառավարութիւնը, չմած, խօսք չէր դտնում իր ծրագիրը պաշտպանելու համար։

Մի ուրիշ նմոյշ է հանդիսանում Թիֆլիսի պարադան։

Ընթերցողը գիտէ արդէն, որ Ժորդանիայի կառավարութեան օրհնութեամբ, վրացիք, 1919–ի բռնի եւ արհեստական ընտրութիւններով, ասպարէզից քշեցին հայերին եւ «ազգայնացրին» Թիֆլիսի ինքնավարութիւնը, թէեւ նրանք այդ քաղաքի ազգաբնակութեան հաղիւ մի քառորդն էին կազմում։ Այսօր էլ վրաց բոլշեւիկները արդոսեան աչքերով հետեւում են, որ ոչ մի «աւելորդ» հայ ներս չթափանցի քաղաքային գործերի մէջ։ Դժբախտաբար, չեմ կարող ասել, թէ այժմս Թիֆլիսի ազգային հատուածները ի՛նչ համեմատութեամբ են ներկայացուած քաղաքային ինքնավարութեան մէջ։ Սակայն, 1923–ին պատկերը հետեւեալն էր. Գործադիր Խորհրդում վրացիք կազմում էին 43%, հայերը՝ 17%, մնացած ազգութիւնները՝ 40%։ Գալով Գործադիր Կոմիտէին՝ նրա 36 անդամից 27–ը վրացի էին, 4–ը հայ, 3–ը ռուս, 1–ը թաթար եւ 1–ը հրէայ։ Աւելի եւս յատկանշական էր Գործադիր Կոմիտէի նախագահութեան պատկերը. նրա 11 անդամից 10–ը վրացի էին եւ մի հատը՝ կարմիր բանակի ներկայացուցիչը՝ ռուս... Չնայած այս պերճախօս թուերին՝ Բուդո Մտիվանին եւ իր համախոհներն այն ժամանակ այնպիսի հաւար էին բարձրացրել «հայկական ներխուժման» դէմ, որ անդամ Օրջոնիկիձէն հարկ համարեց, Կոմկուսի 12–րդ Համագումարում, նրանց սանձը քաշել*)...

Եթէ այս մասնակի դէպքերից անցնենք վիրահայ ժողովրդի ընդհանուր տրամադրութեանը՝ այնտեղ էլ կը տեսնենք նոյն ճնշումութիւնը, ինչ որ կար առաջ, Վրաստանի անկախութեան օրերին։ Մի կողմ թողած վրաց բոլշեւիկների կազմակերպած թալանը, որին ենթարկուեցին եւ ենթարկւում են շարունակ հայերը աւելի մեծ չափերով, քան վրացիները՝ նրանց մէջ բովանդակ ծաւալով մնում է այն ծանր զգացումն, որ իրենք հանդուրժւում են միայն Վրաստանում եւ ոչ թէ նկատւում իբրեւ իրաւատէր քաղաքացիներ։

Անկախ իր կամքից՝ այս զգացման արդարացիութիւնն էր ապացուցանում անցեալ թէ նախանցեալ տարի վրաց կոմունիստներից մէկը՝ պաշտօնական մի ժողովում բացականչելով.

«Մարքսն ասել է. պրոլետարնե՛ր բոլոր երկրների միացէք։ Բայց նա չէ ասել, որ հայերը բոլոր երկրներից հաւաքուեն Վրաստան»։

Ի հարկէ, վրացի կոմունիստը շատ լաւ գիտէր, որ բարեբախտաբար հայերն այլեւս չեն հաւաքւում Վրաստան։ Նրա խօսքը վերաբերում էր արդէն Վրաստանում դտնուող վիրահայ ժողովրդին եւ խօսքն այն իմաստն ունէր, որ այդ ժողովուրդը պէտք է հեռանայ այնտեղից։ Այսինքն՝ նա սրախօսութեան ձեւով արտայայտում էր նոյն պահանջը, ինչ որ մի ժամանակ բացայայտ կամ քողարկուած ձեւով առաջադրւում էր վրաց ազգայնականների եւ մենշեւիկների կողմից։

Զարմանալի կը լինէր, եթէ Վրաստանի հին եւ նոր վարիչների կողմից մօտ տասը տարի հրահրուող հակահայկական տրամադրու-

*) Տե՛ս «Պրաւդա» 1923 թ. 26 Ապրիլ, թիւ 91։